ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
Վիկտորյա Քեշիշյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի փորձագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
Մոլդովայի Հանրապետություն, ք.Քիշնև, 2025 թ.սեպտեմբերի 8-ից 12-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալություն (IAEA)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
Մասնակցություն ԱԷՄԳ Տեխնիկական համագործակցության շրջանակներում կազմակերպվող «Էլեկտրաէներգիայի շուկաների և էներգետիկ անցում» խորագրով տարածաշրջանային հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Եվրոպական միջսահմանային ինտեգրված էներգահամակարգեր և դրանց ճկուն, կայուն և անվտանգ գործունեության ապահովում, ատոմային էներգետիկա և էլեկտրաէներգիայի շուկա, վերականգնվող էներգիայի ցանցին ինտեգրում, տարածաշրջանային համագործակցություն և միջսահմանային առևտուր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
ԱԷՄԳ ծրագրի շրջանակներում տարածաշրջանային հանդիպումը հյուրընկալում էր Մոլդովայի էներգետիկայի նախարարությունը, որին մասնակցում էին էներգետիկ բնագավառի փորձագետներ միջազգային կառույցներից (ԱԷՄԳ/IAEA, ԵՄ էներգետիկ համայնք), ինչպես նաև վերականգնվող և ատոմային էներգետիկայի հարցերով զբաղվող գերատեսչությունների ներկայացուցիչներ, էլեկտրաէներգետիկ շուկայի մասնակից և լրացուցիչ գործունեություն իրականացնող ընկերությունների ներկայացուցիչներ Արևելյան Եվրոպայի երկրներից (Ալբանիա, Բուլղարիա, Վրաստան, Լատվիա, Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Լեհաստան, Սլովակիա, Մոլդովա, Տաջիկստան, Թուրքիա, Ուզբեկստան, Հայաստան):
Քննարկված հարցերի շրջանակներում էին էլեկտրաէներգիայի եվրոպական շուկան, շուկայի և բաշխման ցանցի մոդելավորումը, առանձնահատկությունները, ճկուն և համակարգային ծառայությունները, օժանդակ ծառայությունների ձեռքբերումը, բալանսավորումը և բալանսավորման շուկան, վերականգնվող էներգետիկայի կրճատում և ցանցին

ինտեգրում, ատոմային էներգետիկան և էներկտրաէներգիայի շուկան, տարածաշրջանային ինտեգրացիա և միջսահմանային առևտուր:

Միջոցառման շրջանակներում կազմակերպվեց տեխնիկական այց Մոլդովա-Ռումինիա միջհամակարգային ցանցի զարգացման ծրագրի շրջանակներում վերակառուցվող բարձրավոլտ ենթակայան:

Միջոցառման շրջանակներում միջասահմանային էներգահամակարգերի, տարաշրջանային համագործակցության և էլեկտրաէներգիայի առևտրի վերաբերյալ զեկույցներ ներկայացրեցին Մոլդովայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Թուրքիայի, Վրաստանի, Տաջիկստանի ներկայացուցիչները: Հայաստանի ներկայացուցիչների զեկույցները փոխանցվեցին Ծրագրի ղեկավարին և միջոցառման կազմակերպիչներին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա անելիքների վերաբերյալ և հաջարդ հանդիպմանը ներկայացնել հետագա համագործակցության թեմաներ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նշվեց, որ Ծրագրի հաջորդ եզրափակիչ հանդիպումը կայանալու է ս.թ. դեկտեմբերի 9-ից 11-ը Նիկոսիայում:

ՀՀ ՏԿԵ նախարարության էներգետիկայի
վարչության ՎԷ բաժնի փորձագետ Վ. Քեշիշյան